

2010թ. առաջին կիսամյակի ՀՀ պետական բյուջեի կատարման ամփոփ
բնութագիրը

2010 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի եկամուտները կազմել են ավելի քան 366.3 մլրդ դրամ, իսկ ծախսերը՝ 383.2 մլրդ դրամ, որոնք ապահովել են կառավարության կողմից առաջին կիսամյակի համար հաստատված ծրագրի համապատասխանաբար 110.3 և 92.6%-ը: Պետական մյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշները կատարվել են եկամուտների գծով՝ 50.4%-ով, ծախսերի գծով՝ 44.8%-ով:

Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ պետական մյուջեի եկամուտներն աճել են 21.9%-ով կամ 65.9 մլրդ դրամով: Ընդ որում, 21.3%-ով (59.9 մլրդ դրամով) ավելացել են հարկային եկամուտները, պետական տուրքերը և պարտադիր սոցիալական ապահովության վճարները, 41.9%-ով կամ 7 մլրդ դրամով՝ այլ եկամուտները: Միևնույն ժամանակ, պաշտոնական դրամաշնորհների գծով մուտքերը նվազել են 38.3%-ով կամ 1 մլրդ դրամով:

Պետական մյուջեի եկամուտների 93%-ը ձևավորվել է հարկային եկամուտների, պետական տուրքերի և պարտադիր սոցիալական ապահովության վճարների, 6.5%-ը՝ այլ եկամուտների, 0.5%-ը՝ պաշտոնական դրամաշնորհների հաշվին: «Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 11-րդ կետին համապատասխան պետական մյուջեում ներառվել են նաև պետական հիմնարկների արտայուջետային ֆոնդերի միջոցները, որոնց եկամուտները հաշվետու ժամանակահատվածում կազմել են շուրջ 9.1 մլրդ դրամ:

2010 թվականի առաջին կիսամյակի ընթացքում պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտներն ու պետական տուրքերը կազմել են շուրջ 286.2 մլրդ դրամ և 11.7%-ով գերազանցել առաջին կիսամյակում ծրագրված մուտքերը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ նշված եկամուտներն աճել են 22.8%-ով կամ 53 մլրդ դրամով, ինչը հիմնականում պայմանավորված է ավելացված արժեքի հարկի և եկամտահարկի աճով:

Հարկերի և տուրքերի 49.8%-ն ապահովվել է ավելացված արժեքի հարկի հաշվին, որը կազմել է շուրջ 142.6 մլրդ դրամ և 36.1%-ով կամ 37.8 մլրդ դրամով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: ԱԱՀ-ի մուտքերից ավելի քան 92.3 մլրդ դրամը ստացվել է ՀՀ սահմանին հարկումից, 50.2 մլրդ դրամը՝ ներքին

շրջանառությունից: Հարկ է նշել, որ մուտքերի աճ է արձանագրվել և ՀՀ սահմանին հարկումից, և ապրանքների ու ծառայությունների ներքին շրջանառությունից ստացվող մուտքերի գծով, ընդ որում, վերջիններիս աճի տեմպը գերազանցել է ներմուծումից ստացվող եկամուտների աճի տեմպին:

Պետական բյուջեի հարկային եկամուտների ու պետական տուրքերի 7.5%-ն ապահովվել է ակցիզային հարկի հաշվին՝ կազմելով շուրջ 21.4 մլրդ դրամ: Մասնավորապես՝ հանրապետություն ներմուծված ենթակցիզային ապրանքների հարկումից ստացվել է շուրջ 15.3 մլրդ դրամ, որից 6.9 մլրդ դրամը՝ մենզինի և դիզելային վառելիքի, 6.1 մլրդ դրամը՝ ծխախոտի ներմուծման հարկումից: Հանրապետությունում արտադրվող ենթակցիզային ապրանքների հարկումից պետական բյուջեի մուտքերը կազմել են 6.1 մլրդ դրամ, որից 3 մլրդ դրամը ստացվել է ներքին արտադրության ծխախոտի իրացումից: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ակցիզային հարկի մուտքերն աճել են 12.2%-ով կամ 2.3 մլրդ դրամով:

2010 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների 15.2%-ն ապահովվել է շահութահարկի հաշվին՝ կազմելով 43.5 մլրդ դրամ: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ շահութահարկի մուտքերը նվազել են 3.2%-ով կամ 1.4 մլրդ դրամով:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջե է մուտքագրվել շուրջ 34.5 մլրդ դրամ եկամտահարկ՝ ապահովելով հարկերի և տուրքերի 12.1%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ եկամտահարկի մուտքերն աճել են 28.7%-ով կամ 7.7 մլրդ դրամով:

Մաքսատուրքի գծով մուտքերը կազմել են ավելի քան 15.2 մլրդ դրամ՝ 28.8%-ով կամ 3.4 մլրդ դրամով գերազանցելով 2009 թվականի համապատասխան ցուցանիշը:

2010 թվականի առաջին կիսամյակի ընթացքում բյուջե են մուտքագրվել ավելի քան 8.6 մլրդ դրամ պետական տուրքեր՝ կազմելով ծրագրված մուտքերի 98.7%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված մուտքերն աճել են 4.4%-ով կամ 363.4 մլն դրամով:

Գործունեության առանձին տեսակներից առաջին կիսամյակում գանձվել են ավելի քան 10.8 մլրդ դրամ հաստատագրված վճարներ՝ ապահովելով հարկային եկամուտների ու պետական տուրքերի 3.8%-ը: Նշված ցուցանիշը նախորդ

տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 4.2%-ով կամ 479 մլն դրամով: Մասնավորապես՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ զգալի անկում է արձանագրվել առևտրի իրականացման վայր կազմակերպելու, առևտրի իրականացման վայրից դուրս գտնվող՝ խանութների, կրպակների (տաղավարների) և այլ վաճառատեղերի միջոցով առևտրական գործունեություն իրականացնելու և ավտոտրամսպորտային միջոցների գագալցման գործունեության կազմակերպման համար գանձվող հաստատագրված վճարների գծով:

2010 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջե են մուտքագրվել շուրջ 4 մլրդ դրամ բնօգտագործման և բնապահպանական վճարներ, որոնք նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ ավելացել են 78.7%-ով՝ իիմնականում պայմանավորված օգտակար հանածոների արդյունահանման և ՀՀ ներմուծվող՝ շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների համար գանձվող վճարների աճով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջե են մուտքագրվել 5.6 մլրդ դրամ այլ հարկեր: Մասնավորապես՝ ավելի քան 1.8 մլրդ դրամ է կազմել «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված ռոյալթին, 167 մլն դրամ՝ կոնցեսիոն վճարը, 1.4 մլրդ դրամ՝ ճանապարհային վճարները, 669.9 մլն դրամ՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, 10.5 մլն դրամ՝ արտոնագրային վճարները, 855.7 մլն դրամ՝ հարկային օրենսդրության խախտման համար «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված տուգանքները, 13.5 մլն դրամ՝ ՀՀ հարկային մարմինների կողմից ՀՀ պետական կառավարման մարմիններում և պետական հիմնարկներում կատարված ստուգումների և վերստուգումների արդյունքում առաջադրված լրացուցիչ հարկային և մաքսային պարտավորությունների մարման համար պետական բյուջեից իրականացվող վճարումները և 660.9 մլն դրամ՝ ՀՀ կառավարության առընթեր հարկային պետական ծառայության նյութական խրախուսման ֆոնդի եկամուտները: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ այլ հարկերի փաստացի ցուցանիշն ավելացել է 40.3%-ով կամ 1.6 մլրդ դրամով:

Պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով բյուջետային եկամուտները կազմել են 54.7 մլրդ դրամ՝ 11.3%-ով գերազանցելով կիսամյակային ծրագիրը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ

պարտադիր սոցիալական ապահովության վճարներն աճել են 14.3%-ով կամ 6.8 մլրդ դրամով:

2010 թվականի առաջին կիսամյակում պետական բյուջեի այլ եկամուտները կազմել են 23.8 մլրդ դրամ և 9.9%-ով գերազանցել ծրագրային ցուցանիշը: Նշված գումարից ավելի քան 7 մլրդ դրամը կազմել են ՀՀ պետական հիմնարկների արտայուժետային եկամուտները: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ այլ եկամուտներն աճել են 41.9%-ով կամ 7 մլրդ դրամով: Մասնավորապես՝ 4.9 անգամ կամ 6.2 մլրդ դրամով ավելացել են բանկերում և այլ ֆինանսավարկային հաստատություններում բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարները, 7 անգամ կամ 2.7 մլրդ դրամով՝ ռեզիլենտներին տրամադրված վարկերի օգտագործման տոկոսավճարները: Միևնույն ժամանակ, օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտները նվազել են 2.1 մլրդ դրամով կամ 18.3%-ով՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2009 թվականի հաշվետու ժամանակահատվածում շուրջ 2.1 մլրդ դրամ էր վճարվել ՀՀ շարժական կապի գլոբալ համակարգի ծառայությունների մատուցման 3-րդ օպերատորի մրցույթի հաղթողի կողմից:

2010 թվականի առաջին կիսամյակում ստացվել են շուրջ 1.7 մլրդ դրամի պաշտոնական դրամաշնորհներ՝ կազմելով նախատեսվածի 33.3%-ը: Մասնավորապես՝ շուրջ 1.4 մլրդ դրամ մուտքագրվել է պետական հիմնարկների արտայուժետային հաշիվներին՝ նրանց կողմից իրականացվող ծրագրերի ֆինանսավորման համար, որոնց կիսամյակային կատարողականը կազմել է 76.1%: 285.6 մլն դրամը կամ նախատեսվածի 82.8%-ը կազմել է «Պարենային արտադրության աճ» ծրագրի շրջանակներում նապանիայի կառավարության կողմից տրամադրված ապրանքանյութական արժեքների դրամայնացումից ստացված գումարը: Առաջին կիսամյակում 2.9 մլրդ դրամ էր նախատեսվել Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված միջոցառումների ֆինանսավորման համար, որը չի ստացվել:

2010 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին կատարվել են 383.2 մլրդ դրամի ծախսեր՝ կազմելով կիսամյակային ծրագրի 92.6%-ը: Մասնավորապես՝ 348.8 մլրդ դրամ են կազմել ընթացիկ ծախսերը, 34.5 մլրդ դրամ՝ ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները: Հաշվետու

Ժամանակահատվածում 6.1 մլրդ դրամի ծախսեր են կատարվել պետական հիմնարկների արտայութետային միջոցների հաշվին: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական բյուջեի ծախսերն ավելացել են 10.3%-ով կամ 35.8 մլրդ դրամով: Աճը հիմնականում պայմանավորված է պետական պարտքի սպասարկման ծախսերի, դրամաշնորհների և ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերի ավելացմամբ, ինչպես նաև ոչ ֆինանսական ակտիվների օտարումից նուտքերի նվազման:

Ընթացիկ ծախսերը հաշվետու ժամանակահատվածում կազմել են 348.8 մլրդ դրամ՝ 94.4%-ով կատարելով կիսամյակային ծրագիրը: Նախորդ տարվա առաջին կիսամյակի համեմատ ընթացիկ ծախսերն աճել են 8.6%-ով կամ 27.7 մլրդ դրամով: Ընթացիկ ծախսերից 32.5 մլրդ դրամն ուղղվել է պետական հիմնարկների աշխատողների աշխատավարձերի վճարմանը, շուրջ 2.2 մլրդ դրամը՝ պարտադիր սոցիալական ապահովության վճարմերին, որոնք կազմել են ծրագրի համապատասխանաբար 93.6%-ը և 90.4%-ը: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ աշխատավարձի ծախսերն աճել են 6.3%-ով, իսկ սոցիալական ապահովության վճարմերը՝ 3.6%-ով: Ծառայությունների և ապրանքների ձեռքբերման նպատակով պետական բյուջեից օգտագործվել է 68.4 մլրդ դրամ, որի կիսամյակային ծրագիրը կատարվել է 92.1%-ով և 3%-ով գերազանցել նախորդ տարվա նույն ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 14.7 մլրդ դրամ հատկացվել է պետական պարտքի սպասարկմանը՝ կազմելով կիսամյակային ծրագրի 77.6%-ը: Մասնավորապես՝ նշված գումարից 7.8 մլրդ դրամը տրամադրվել է ներքին, 6.9 մլրդ դրամը՝ արտաքին պարտքի սպասարկմանը, որոնք կազմել են կիսամյակային ծրագրի համապատասխանաբար 82.8%-ը և 72.4%-ը: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ պետական պարտքի սպասարկման ծախսերն աճել են 148%-ով կամ 8.8 մլրդ դրամով, ընդ որում, աճ է արձանագրվել ինչպես ներքին, այնպես էլ արտաքին պետական պարտքի սպասարկման ծախսերի գծով: Անցած ժամանակահատվածում ՀՀ պետական բյուջեից տրամադրվել են շուրջ 8.4 մլրդ դրամի սուլսիրիաներ՝ կազմելով կիսամյակային ծրագրի 96%-ը և 1.9%-ով գիշել նախորդ տարվա նույն ցուցանիշը: 42.4 մլրդ դրամ են կազմել պետական բյուջեից տրամադրված դրամաշնորհները, որից 41.6 մլրդ դրամը տրամադրվել է պետական հատվածի այլ մակարդակներին, 695.8 մլն դրամը՝ միջազգային

կազմակերպություններին, 76.8 մլն դրամը՝ օտարերկրյա կառավարություններին: Մասնավորապես՝ համայնքների բյուջեներին համահարթեցման սկզբունքով տրամադրվել են 16.2 մլրդ դրամի դոտացիաներ՝ կազմելով ծրագրի 100%-ը և 17.9%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Դրամաշնորհների կիսամյակային ծրագիրն ընդհանուր առմամբ կատարվել է 95.7%-ով, իսկ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նշված ծախսերն ավելացել են 22.2%-ով:

Հաշվետու ժամանակահատվածում պետական բյուջեի ընթացիկ ծախսերի 34.6%-ն ուղղվել է սոցիալական նպաստներին և կենսաթոշակներին, որոնք կազմել են 120.6 մլրդ դրամ և 98.8%-ով ապահովել ծրագրի կատարումը: Մասնավորապես՝ 87.9 մլրդ դրամ (99.2%) են կազմել կենսաթոշակները, 32.7 մլրդ դրամ (97.7%)՝ նպաստները: 2009 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ կենսաթոշակների գծով բյուջեի ծախսերն էական փոփոխություն չեն կրել, իսկ նպաստներն ավելացել են 9.6%-ով:

Առաջին կիսամյակում պետական բյուջեի միջոցներից 59.5 մլրդ դրամ տրամադրվել է այլ ծախսերին՝ 93.1%-ով ապահովելով ծրագրի կատարումը և 7.3%-ով գերազանցելով նախորդ տարվա նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Պետական բյուջեի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները կազմել են 34.5 մլրդ դրամ կամ առաջին կիսամյակի ծրագրի 77.6%-ը: Շեղումը հիմնականում պայմանավորված է հիմնական միջոցների գծով ծախսերի ցածր՝ 78.9% կատարողականով: Նշված ծախսերը կազմել են 35 մլրդ դրամ և 8.3%-ով գերազանցել 2009 թվականի նույն ժամանակահատվածի ցուցանիշը: Հաշվետու ժամանակահատվածում 564 մլն դրամ է մուտքագրվել ոչ ֆինանսական ակտիվների օտարումից՝ նախատեսված 2.2 մլն դրամի և նախորդ տարվա 6 մլրդ դրամ փաստացի մուտքերի դիմաց:

2010 թվականի առաջին կիսամյակում ՀՀ պետական բյուջեն կատարվել է 16.9 մլրդ դրամ պակասուրդով՝ նախատեսված 81.9 մլրդ դրամի և 2009 թվականի նույն ժամանակահատվածի 47 մլրդ դրամ փաստացի ցուցանիշի դիմաց: Պակասուրդի ֆինանսավորման համար ներքին աղյուրներից ներգրավվել է շուրջ 26 մլրդ դրամ կամ ծրագրի 28.7%-ը, իսկ արտաքին աղյուրները կազմել են -9.1 մլրդ դրամ կամ ծրագրի 103.6%-ը:

Դեֆիցիտի ֆինանսավորման ներքին աղյուրներում 3.1 մլրդ դրամ է կազմել փոխառու միջոցների գուտ մարումը, որից 2.4 մլրդ դրամն ուղղվել է գանձապետական պարտատոմսերին՝ նախատեսված 13.1 մլրդ դրամ գուտ մուտքերի դիմաց: Մուրհակների մարման նպատակով առաջին կիսամյակի ծրագրով նախատեսված վճարումները կատարվել են 100%-ով՝ կազմելով 21.7 մլն դրամ: 772.8 մլն դրամ ուղղվել է «ՎՏԲ-Հայաստան» ՓԲԸ-ից ստացված վարկի մարմանը: Անցած ժամանակահատվածում պակասուրդի ներքին ֆինանսական ակտիվները կազմել են 29.1 մլրդ դրամ կամ ծրագրվածի 37.2%-ը: Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ ռեզիդենտներին պետական մյութեից տրամադրվել են 344.7 մլն դրամի վարկեր: Նշված գումարից 175 մլն դրամն ուղղվել է Գերմանահայկական հիմնադրամի կողմից իրականացվող մասնավոր փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման վարկային ծրագրին՝ որպես կառավարության համաֆինանսավորում: 109 մլն դրամ է հատկացվել «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամի կողմից հիմնադրված վարկային կազմակերպությանը՝ Ռուսաստանի Դաշնության կողմից 2009 թվականին տրամադրված պետական վարկի միջոցներից: 60.7 մլն դրամ արտոնյալ պայմաններով տրամադրվել է բռնադատված քաղաքացիներին՝ անհատական բնակարանային շինարարության վարկավորման նպատակով:

Չուրջ 16.2 մլրդ դրամ ստացվել է տրամադրված ներքին վարկերի վերադարձից (6.1 անգամ գերազանցելով ծրագիրը), որի գգալի մասը վճարվել է «Հայուսգազարդ» ԲԲԸ-ի կողմից:

Առաջին կիսամյակում նախատեսված 76 մլրդ դրամի փոխարեն պետական մյութեի ազատ միջոցներից օգտագործվել է ընդամենը 13.3 մլրդ դրամ:

Անցած ժամանակահատվածում պետական մյութեի պակասուրդի արտաքին ֆինանսավորումը կազմել է -9.1 մլրդ դրամ կամ կիսամյակային ծրագրի 103.6%-ը: Անցած ժամանակահատվածում Արժույթի միջազգային հիմնադրամի կողմից տրամադրվել են շուրջ 15.2 մլրդ դրամի վարկային միջոցներ: Արտաքին պարտավորությունների մարմանն ուղղվել է 4.6 մլրդ դրամ, որից 3.1 մլրդ դրամը հատկացվել է Համաշխարհային բանկի աջակցությամբ իրականացվող ծրագրերի գնով պարտքի մարմանը, 211.9 մլն դրամ՝ ԳԶՄՀ նկատմամբ ունեցած պարտքի մարմանը, 552.9 մլն դրամ է տրամադրվել Էլեկտրաէներգիայի հաղորդման և

μաշխման համակարգի ծրագրի գծով ճապոնիայի նկատմամբ պարտքի մարմանը, 444.7 մլն դրամ՝ ԱՄՆ ապրանքային վարկերի մարմանը, 25.2 մլն դրամ՝ ԱԵԿ-ի վառելիքի չոր պահպաննան համակարգի ծրագրի գծով Ֆրանսիայի նկատմամբ պարտքի մարմանը և 211.9 մլն դրամ՝ Քանաքեռ ՀԵԿ-ի վերականգնման անհետաձգելի օգնության ծրագրի գծով Գերմանիայի դաշնային հանրապետության նկատմամբ պարտավորությունների մարմանը:

Անցած ժամանակահատվածում 17.7 մլրդ դրամ միջազետական վարկ է տրամադրվել ԼՂՀ-ին: Վրաստանի կողմից միջազետական վարկի գծով կատարվել է 44.8 մլն դրամի վճարում, որը նախորդ տարվա պարտավորությունն է և Վրաստանի կողմից փոխանցվել է 2009 թվականի դեկտեմբերին, սակայն գանձապետական միասնական հաշվին մուտքագրվել է 2010 թվականի հունվար ամսին: Միջազգային ֆինանսական կազմակերպություններին ՀՀ անդամակցության գծով պարտավորությունների կատարմանն ուղղվել է 733.5 մլն դրամ: Դաշվետու ժամանակահատվածում 1.2 մլրդ դրամով ավելացել է արտաքին աղբյուրներից ստացված դրամաշնորհային միջոցների մնացորդը: